ԲԱԶՄԱՎԷՊ

ՌՅԺԲ, 1863 — ԻԱ ՏԱՐԻ. — ԱՊՐԻԼ

ԲԱՆ ԽՐԱՏԱԿԱՆ ԵՒ ՊԻՏԱՆԻ

Յուկիփորիկ գրոց.

Յաշխարհս անպէտ իրք չկայ։ Ամէն իրք՝ իրաց մի պէտք է. պահել պիտի որ 'ի դէմ գայ, որպէս բժիշկ։

Նենգաւոր և անզգամ ազգին՝ մի շատ երևիլ և մի շատ խօսիր. կու տեղեկանայ և զուրքն առնելով է։[1]

Ի սօհպաթն[2] ոչ ագահի մօտ և ոչ 'ի ճահիլի[3] քով մի նստիր։

Բարի և չնորհօք և պատուական պիտի սկսուածք, և գլխուն խօսքն 'ի յառջի խօսքն բերէ կապէ։

Գիտութիւն՝ առաջին խօսքն է մարդուն. և չնորհք՝ սկսուածքն է բանին։

Մարդուն կացքն 'ի հագուստէն ճանաչի, և գնացքն 'ի հետ մարդոյն, և այն գործովն լինի։

Մարդոյն սիրտն ընդ որ լինի՝ աչքն ու հայուածքն ընդ այն է։

1. Խօսս առայ, փախչի։ — 2. Զրոյց։ — 3. Մանկահասակ։

Ոչ կայծակեալ հուր ընդդէմ քամու խաղաղ կայ, և ոչ յերես ելած կին և որդի՝ մեծի խօսից կարէ հնազանդիլ։

Մ'ին սատակ տուր սիրելի չինէ, հազար սատակ տուր մի աւիրեր։

Երբ կարգաւորի կամ ծերի հանդիպիս, ջանայ որ բարեն առաջ դու տաս։

Երբ սատակ փոխ տաս՝ մարդոյ յառջև տուր, բայց յեկեղեցւոյ?[1] մէջ մի ուզեր։

Զկինն 'ի ջրաղացն մի ուղարկեր, ոչ 'ի պաղչայ և 'ի հեռու տեղ։

Երբ 'ի ճանապարհ երթաս՝ կնոջդ մի ասեր թէ յուշ կու գամ։

Զծածուկ խորհուրդ կնոջդ մի ասեր։ Զդրամդ 'ի կինդ 'ի պահ մի տար։ Ըզկինդ գինեսէր մի առներ։

Ի գինարբուսս չատախօս մի լիներ։

1. Յօրինակին յԾ։

Հետ այլազգոյ մի խմեր, կամ հետ մարդոյ՝ որ նախանձ ունիս։

Ի քո նմանոյտ քով նստիր։

Ի կենդանութեանդ զտանդ իշխանութիւնն և զդրամդ՝ 'ի տղիդ ձեռն մի տար։ Թարաքայ[1] մի որ հեռու տեղաց գայ՝ զոտով առ։

Երբ 'ի դատաստան երթաս՝ դու յետոյ գնա։

Երկու բան տարեկուս կայ, մէկ որ մնացուն[2] ցած լինայ, երկու որ մարդն կապած ելնայ։ Երկու տարեկուս այլ կայ. մէկ որ պարտուտէրն 'ի դուռն գայ. երկու որ ինքն ծեր լինայ և մատղաշ կին առնու։

Ցուն մի չիներ 'ի ճանապարհի վրայ, ոչ 'ի խանի քով ոչ 'ի բերդի քով, ոչ 'ի ձորբերան և ոչ 'ի խաստաղն։[3]

Բարեկամութիւն չունի ոչ խաստաղն, ոչ պոյաճին,[4] ոչ ջաղջիպանն և գինեծախն, և այլ։

Երեք մարդու խօսք անցնուկ լինի, հարստին, մահպուպին,[5] ամաքտարին։[6]

Թէ ուզես որ հօրմաթ[7] անես՝ սիրելիի մօտ կամ վարդապետի մօտ երթաս, դարտակ մի երթար. և ոչ յուխտատեղ առանց խընկի և մոմի մի գար։

Թէ որ ուզես որ մուրատ[8] առնես և ուրախանաս, վաղուին ճաշուն՝ խլէ և կեր, օրհասրկին գնէ ու կեր, իրիկունն թէ ձրի տան՝ մի ուտեր։

Լաւ՝ հոր մի հաց պարտական, քան փոր մի հաց։

Զար աչաց բարի մի ցրցներ, և ոչ չար ականջի՝ բարի մի խմացներ։

Զսարմիատ[9] ձեռացդ մի հաներ, և դքո բանդ ձեռոգդ հոգա։

Զխաբարն[10] 'ի տղէն առ և 'ի հարբածէն և 'ի կնկնէն։

Ի գիներբունս շատ մի յեմեր[11] շառ է։[12]

1. Թուի թերէ։է, ժառանգութիւն, կամ թերէ։էմ ազգ հինահար։ — 2. Ապիտելի, (պասիերմաւեգ)։ — 3. Թուի ։էոիպ, աւազուտ տեղի։ — 4. Ներկարար։ — 5. Բժիշկ։ — 6. Երախտաւոր, արդիւնաւոր։ — 7. Մեծարել, պատուել։ — 8. Զուարճանալ, ընուլ զկամս։ — 9. Դրամագլուխ։ — 10. Լուր։ — 11. Մի յամեր, մի ուշանար։ — 12. Զար, մոլութիւն։

Զքո բանդ այլոց քաղով[1] մի ձգեր։

Դարձեալ գիտացիր որ երեք մարդ կան յաշխարհս խոտելի. նախ այնք՝ որ ոչ գիտեն. երկու՝ որ գիտեն զինքեանց ոչ գիտելն և ոչ հոգան զի գիտասցեն. երեք՝ որ ոչ գիտեն՝ և խոտեն զգիտողն։

Դարձեալ գիտութիւն յերկու դէմս բաժանի. մէկ զի գիտէ և գիտէ զի գիտէ և զգիտութիւն խոստովանի. սա իմաստուն է և հեզ, ուսիր 'ի նմանէ։ Երկու որ ոչ գիտէ և գիտէ որ ոչ գիտէ, և ըզգիտութիւն խոստովանի, և զսա իմաստուն գոլ ասել, զի գիտաց զչափ անձին իւրոյ։

Դարձեալ տգէտն որ ոչ գիտէ և գիտէ որ ոչ գիտէ, և ասէ թէ գիտեմ՝ յանդուգն է և լիրբ, փախիր 'ի նմանէ։ Երկրորդ, որ ոչ գիտէ և չգիտէ թէ ոչ գիտէ, և ասէ եթէ գիտեմ, այն մոլեգնեալ է և դիւահարեալ, հեռացիր 'ի նմանէ։

Յոյս։

Ես ճանչցեր էի զայն. տասն և չորս գարուն իրենց գեղեցկութիւնը տուեր էին անոր. երեսները փթրթեցուցեր էին անմեղութեան ծաղկի մը պէս։ Օդն կարծես թէ կու լուսաւորուէր անոր չորս կողմը, և ճառագայթներով կու զարդարէր զնա։ Եթէ յուսոյ հրեշտակն մեզի երևելու ելլար՝ անշուշտ անոր պայծառ աչուքներովը, անոր քաղցր դիմքը, և անոր անբացատրելի ժպիտովը պիտի երևէր։ Ի՞նչ պէտք է ըսել մօրն երջանկութեանը, երբ կու դիտէր այսպիսի սիրելի զաւակ մը. անոր երջանկութեանը, երբ մարք՝ իրեն երանի կու տային, երբոր ապագայն կու ցուցնէր իրեն երկայն ուրախութիւններ,

1. Թերևս ։էոպ, գարշապար, ոտք։